«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բանաստեղծության ուսուցումը: Չափածո խոսքի ուսումնասիրության մի քանի առանձնահատկություններ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Մ. Խորենացու անվան 143-րդ հիմնական դպրոց Հասմիկ Հայկի Ենոքյան

Վերապատրաստող՝ Սողոմոնյան Արամ

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1.Բանաստեղծության ուսուցումը: Չափածո խոսքի ուսումնասիրության մի քանի առանձնահատկություններ……5

2.Չափածո խոսքի ուսուցման օրինակելի ձև (Պ. Դուրյանի «Լճակ» բանաստեղծության օրինակով)……11

Եզրակացություններ և առաջարկություններ……19

Օգտագործված գրականության ցանկ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Պոեզիան իր ձևի մեջ է ամփոփում ժողովրդի ձգտումները և հոգևոր բարձրագույն դրսևորումները, ինչպես նաև աշխարհը փոխելու քաջություն է տալիս:

Պոեզիան ճամփորդություն է, որը դուրս չի գալիս իրականության սահմաններից, այն արտահայտում է մարդկանց զգացմունքները, պահանջմունքները և հույզերը: Պոեզիայի շունչը թև ու թռիչք է տալիս աշակերտների մտքին, զգացմունքներին ու երևակայությանը: Ուսուցիչը պետք է հասնի նրան ,որ սովորողները հստակորեն պետք է տեսնեն նրանում թաքնված միտքը, հասկանան իմաստը և հեղինակի վերաբերմունքը իր հերոսների նկատմամբ:

Այս թեմայի ուսումնասիրությունը հատկապես հետաքրքիր և արդիական է, քանի որ չափածոն հիանալի գործիք է ուսումնական գործընթացը զարգացնելու համար, առավելությամբ, որ հնարավոր է այն ներկայացնել որպես խաղ: Այս եղանակով երեխաներին գրավում է ռիթմը և խաղային ակտիվություն դարձած գրականության մոգությունը:

Թեմայի նպատակը և խնդիրները: Սույն թեմայի նպատակն է ներկայացնել,ինչպես նաև ցույց տալ բանաստեղծության ուսուցումը, չափածո խոսքի ուսումնասիրության մի քանի առանձնահատկություններ:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

ա. ներկայացնել բանաստեղծության ուսուցումը, չափածո խոսքի ուսումնասիրության մի քանի առանձնահատկությունները,

բ. քննարկել՝ չափածո խոսքի ուսուցման օրինակելի ձև (Պ.Դուրյանի «Լճակ» բանաստեղծության օրինակով) :

Օբյեկտը և առարկան: Սույն աշխատանքի օբյեկտը հանդիսանում է դպրոցը, իսկ առարկան՝ բանաստեղծության ուսուցումը, չափածո խոսքի ուսումնասիրության մի քանի առանձնահատկությունները:

Հետազոտությունում կիրառված մեթոդները: Հետազոտության ուսումնասիրության համար կիրառվել են բովանդակային, նկարագրական, համեմատական, և համակարգային վերլուծության մեթոդները:

Գրականության տեսություն: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք Է. Ջրբաշյանի[1], Ջ. Գյուլամիրյանի[2], Գ.Կիրակոսյանի[3], Թ. Թովմասյանի[4] և այլ ուսումնասիրությունից:

Աշխատանքը կատարելիս հիմնականում օգտվել ենք մասնագիտական գրքերից, ամսագրերից, համացանցային ռեսուրսներից, պաշտոնական կայքերից և այլն:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից՝ եզրակացությունից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի վերջում ներկայացրել ենք օգտագործված գրականության ամբողջական ցանկը: Աշխատանքի ծավալը կազմում է 20 էջ:

[1] Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Ե., 1980:

[2] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018:

[3] Կիրակոսյան Գ., Հայ գրականություն դասավանդման մեթոդիկա, 2015:

[4] Թովմասյան Թ.,Մայրենի 5, Մեթոդական ուղեցույց, Ե., 2023:

1. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ: ՉԱՓԱԾՈ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամեն մի գեղարվեստական ստեղծագործություն (թե՛արձակ, թե՛ չափածո) ուսուցանելիս փորձառու ուսուցիչը իր առջև նպատակ է դնում հասնել հեռահար նպատակների, այսինքն՝ կրթել ու դաստիարակել հայրենասեր, կամային ուժեղ հատկանիշներով, ազնիվ, բարի, հանդուրժող ու մարդասեր, հասարակության կատարելագործման ու ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատ ու քաղաքացի: Ժամանակակից կրթության բովանդակությունն է ապահովել սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը՝ գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան, ապահովել սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը, նաև ապահովել հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Բանաստեղծությունը գեղարվեստական ստեղծագործության մի տեսակ է, որտեղ իրական կյանքն իր բազմազան ձևերով արտացոլվում է պատկերների, մարդկային կերպարների, խոհերի, ապրումների, զգացմունքների արտահայտման միջոցով: Բանաստեղծը խոսքի միջոցով ստեղծում է մարդկային կյանքի, զգացմունքների ու հոգեկան ներաշխարհի, բնության ու շրջապատի աշխարհի զգայական պատկերներ: Այն սերտորեն կապված է արվեստի մյուս տեսակների՝ երաժշտության և կերպարվեստի հետ: Սակայն բանաստեղծն իր երևակայության ու խոսքի միջոցով կարողանում է զգայական պատկերներ ստեղծել, հասնել այնպիսի արդյունքի, ինչպիսին կերպարվեստն ու երաժշտությունը կարողանում են ձեռք բերել գույների ու ձայների ներդաշնակության միջոցով:

Մայրենիի դասագրքերում որոշակի տեղ է տրված բանաստեղծություններին,որոնք ըստ ժանրային առանձնահատկությունների լինում են էպիկական և քնարական:

Էպիկական բանաստեղծությունները, ավելի մատչելի են դպրոցականներին , որովհետև նրանք ունեն դիպաշար, նրանցում նկարագրվում են դեպքեր, գործողություններ, կան գործող անձեր, որոնք հարաբերվեմ են. դատողություններ անում և այլն: էպիկական բանաստևղծությունները սովորողները կարող են բաժանել

տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների, վերնագրել դրանք, ներկայացնել «բառային նկարչությամբ»», վերարտադրել բովանդակությունը: Շահեկան է օգտագործել տարաբնույթ գննական միջոցներ. սահիկաֆիլմ , կինոնկար, թեմատիկ նկարների համալիր, գունանկարներ, երեխաների նկարչական, ապլիկացիոն աշխատանքները, բեմականացումներ՝ երեխաների պատրաստած բեմական կահավորանքով և այլն:

Քնարական բանաստեղծությունները հիմնականում չունեն հերոսներ ,չեն նկարագրվում դեպքեր: Դրանք ավելի շատ խոհական են, փիլիսոփայական, ներկայացնում են մարդու զգացմունքները, հոգեբանությունը, ապրումները և այլն: Սրանք նպաստում են երեխայի ներաշխարհի և խոսքի հարստացմանը, զարգացմանը և գեղագիտական, զգացմունքային արժեքների ձևավորմանը: Կրտսեր դպրոցականներին առավել մատչելի են բնությանը, հայրենիքին նվիրված քնարական բանաստեղծությունները Դրանց բովանդակության ընկալման դժվարությունները հիմնականում պայմանավորված են գործածված բառերի փոխաբերական իմաստներով, մակդիրներով և լեզվարտահայտչական այլ՝ առավել բարդ միջոցներով: Քանի որ քնարական բանաստեղծության հիմքում մշտապես ընկած են տեսողական, լսողական. զգայություններ, ուրեմն քնարական բանաստեղծության շուրջ աշխատանքի նպատակը պետք է դառնա երեխաների վրա հեղինակի զգայությունների ազդեցությունը:[5]

Յուրաքանչյուր բանաստեղծություն ունի մատուցման իր բանալին, որը բխում է թեմայից, արտահայտած գաղափարից, շարժառիթից ու ասելիքից, ժամանակակից կյանքի հետ անմիջական կապից:

Բանաստեղծության թեմայից են բխում ուսուցչի կիրառած մեթոդներն ու հնարքները: Հաշվի առնելով չափածո խոսքի առանձնահատկությունները' ուսուցիչը սովորողին ներկայացնում է բանաստեղծությունը՝ շեշտելով թեմայի արդիականությունը, մեղեդայնությունը, գունապնակը, հուզականությունը, հանգը, ռիթմը, հյութեղ լեզուն, պատկերավորման միջոցները,ապրումակցումը և ապահովում հետադարձ կապը «Քառաբաժանի», «Անդրադարձի» կամ «Ի՞նչ սովորեցինք» հարցի, , Հնգյակ, ԳՈՒՍ,Վենի դիագրամ, Ելքի քարտի միջոցով, միավորային գնահատման իրականացման համար օգտագործել Quizizz առցանց գործիքը և այլն:

[5] Գյուլամիրյան Ձ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, էջ188 :

Չափածո խոսքի ուսուցման ժամանակ նկատելի է, որ չափածո խոսքի ընկալումը սովորողների համար ավելի դժվար է, քան արձակը. նյութի մատուցման ժամանակ կարող են կիրառվել տարբեր մեթոդներ ու հնարքներ: Կարող են կիրառվել բնագրի կրկնակի ընթերցում, խմբերով ընթերցում ,լսել երաժշտությունը կամ երգի գեղեցիկ կատարումը:

Ուսուցիչը հասկանում է բառային և տեքստային աշխատանքները արդյունավետ կատարելու համար երբ կիրառի համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն աշխատանքի ձևերը:

Ուսուցիչը դասը երբեք չպետք է սկսի հետևությամբ կամ եզրակացությամբ,որից հետո ձգտի հիմնավորել:Ուսուցչի գերագույն նպատակը պետք է լինի, որ դասավանդման արդյունքում աշակերտն ինքը հետևություններ ու եզրակացություններ անի:Այդ ընթացքում հարցը հասունանում է աշակերտի գիտակցության մեջ:[6]

Բանաստեղծության ուսուցման մուտքը կարելի է սկսել բանալի բառերով, հատկապես , երբ այն ձոնված է հայրենիքին կամ մորը: Եթե կան տեղանուններ, ապա կարելի է փոքրիկ զրույց վարել տեղանունների շուրջ, ցուցադրել լուսանկարներ կամ փոքրիկ տեսանյութ: Եթե բանաստեղծության մեջ խոսվում է բնության որևէ երևույթի մասին, ցանկալի է նախ դիտել որևէ գեղեցիկ տեսանյութ, լուսանկարներ, իսկ դասի վերջում հանձնարարել, որ խմբերից մեկը տեսանյութ պատրաստի, մյուսը համապատասխան երաժշտություն գտնի, երրորդը' բնության այդ երևույթին նվիրված բանաստեղծոէթյուններ գտնի կամ լուսանկարներով խճանկար պատրաստի: Բանաստեղծության ուսուցմանը նպաստում են նաև ճանաչողական բնույթի էքսկուրսիաները:

Բանաստեղծության ուսուցմանը նպաստում է նաև բանաստեղծության ռիթմն ու հանգը ճիշտ ընկալելը: Չափածո խոսքի գեղեցկությունը զգալու, սովորելու և մտապահելու համար կարևոր է հասկանալ, թե ինչ են ռիթմն ու հանգը: Նրանք նկատում են, որ բանաստեղծության 2 կամ ավելի տողեր ունենում են նման կամ նույն վերջավորությունը: Դա հանգն է:

Երբ Հայաստան եմ աս**ում,**

Քարն արթնանում է քն**ից**,

[6] Թովմասյան Թ.,Մայրենի 5, Մեթոդական ուղեցույց, Ե., 2023, էջ 177:

Սիրտս թռչում է բն**ից**,

Եվ կակաչները բլր**ից**

Դեպի սարերն են վազ**ում**:

Հ. Սահյան

կամ

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել,

Էլի մեծ էր նա,մեծ էր ու անգին,

Արև աչքերի լույսն է նա թափել՝

Լուսնյակ դառնալով որդոց օրոցքին...

Եվ հիմա քիչ է,թե աչքերս տամ,

Թե սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,

Ա՜խ,մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ,

Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

Հովհաննես Շիրազ

Բանաստեղծության տողերը կարող են հանգավորվել տարբեր եղանակներով.

1. Հանգով կապվում են հարևան տողերը:
2. Քառատողի մեջ կենտ տողերը հանգով իրար են կապվում, զույգ տողերը' իրար:
3. Կարող են հանգավորվել 1-ին և 4-րդ, 2-րդ և 3- րդ տողերը:

Չափածո խոսքի երաժշտականությունը ապահովում է ռիթմը, իսկ ռիթմը հավասար միավորների պարբերական , կանոնավոր կրկնությունն է:

Օր.' Ես լսեցի մի անուշ ձայն,

Իմ ծերացած մոր մոտ էր,

Փայլեց նշույլ ուրախության,

Բայց, ափսո՜ս, որ երազ էր:

Այնուհետև աշակերտներն իրենք են բերում հանգավորման և ռիթմի օրինակներ իրենց անցած բանաստեղծություններից:

Չափածո խոսքի առանձնահատկություններից է նաև բանաստեղծական տունը:

Բանաստեղծական տունը իրար հետ սերտ կապված մի քանի տողերի միասնությունն է: Տողերը հիմնականում իրար հետ կապվում են համահունչ վերջավորություններով: Բանաստեղծական տան ամենապարզ ձևը երկու տողից կազմված միտքն է: Օրինակ՝

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Կան նաև եռատող տներ: Ամենատարածված տեսակը քառատողն է, որն ավելի ամբողջական է ներկայացնում արտահայտված միտքը կամ պատկերը: Օրինաակ՝

ՄԵՐ ՀՈՂԸ

Մեր հողը լեգենդ է, առասպել,
Սասնաբառ էպոսն է մեր կյանքի,
Մեր հողը Նահապետ մեր Հայկն է,
Պսակն է Վարդանանց սխրանքի:

Մեր հողում ամեն ծառ հայ պապ է,
Հայ հայր է, հայ եղբայր ու որդի,
Թոռներին փայփայող հայ տատ է,
Մեր սիրտն է նժդեհված մի ոգի:

Սոկրատ Խանյան

Հազվադեպ լինում են նաև 5, 6, 7 և ավելի տողերից բաղկացած տներ: Հաճախ էլ բանաստեղծությունները կանոնավոր կառուցվածք չեն ունենում: Ժամանակակից հեղինակները գրում են նաև ազատ ոտանավորներ:

Կան բանաստեղծություններ, որոնց երաժշտությունը, մեղեդայնությունը թաքնված են բանաստեղծական տողերում: Աշակերտը պետք է հասկանա, որ հենց դրա շնորհիվ էլ շատ բանաստեղծություններ գտնում են իրենց մեղեդին ու դառնում սիրված երգեր: Օրինակ՝ Ե.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի բանաստեղծությունների մեծ մասը դարձել են սիրված երգեր: Աշակերտները բանաստեղծությունն ավելի հեշտ են սովորում երգելով:

Բանաստեղծությունը ուսուցանելիս միշտ պետք է հիշել, որ գրական

ստեղծագործությունը արվեստի մի տեսակ է և այն սերտորեն կապված է արվեստի մյուս տեսակների՝ երաժշտության ու կերպարվեստի հետ: Չափածո խոսքի ուսուցման ժամանակ միշտ պետք է օգտագործել խոսքի, երաժշտության, կերպարվեստի փոխկապակցված լինելու հանգամանքը: Այս հանգամանքը ավելի հետաքրքիր է դարձնում և՛համագործակցային, և՛ ստեղծագործական, և՛ ինքնուրույն աշխատանքը չափածո խոսքի ուսուցման ժամանակ: Աշակերտները նկարագարդում են բանաստեղծությունը, գտնում հանգավորված տողերը, համապատասխան երաժշտություն գտնում բանաստեղծության համար, տեսանյութ պատրաստում' բանաստեղծության բովանդակությանն ու պատկերներին համապատասխան: Չափածո խոսքի այս առանձնահատկությունը հեշտացնում է բանաստեղծության ուսուցումը, ընկալումը և մտապահումը, դասապրոցեսը հետաքրքիր է դարձնում:

Բանաստեղծության ուսուցումը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդական քայլերով.

1. Նախապատրաստական աշխատանք/ Հնգյակ, Պրիզմա մեթոդներով/
2. Բնագրի ընթերցում (ուսուցչի, ապա գեղեցիկ հնչերանգ ունեցող սովորողների կողմից):
3. Բնագրի հատվածաբար ընթերցում և մեկնաբանում/ԳՈՒՍ, Վենի դիագրամ/:
4. Ամփոփում/Ելքի քարտ՝ 3-2-1մեթոդով/:

2. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ «ԼՃԱԿ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Առարկա՝ Գրականություն

Դասարանը՝8

Դասի թեման՝ Պետրոս ԴՈՒՐՅԱՆ, <<Լճակը>> բանաստեղծությունը

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները և խնդիրները

Ընդհանրացնել և հակիրճ ձևակերպել բանաստեղծության հիմնական գաղափարը:

Զարգացնել դիմացինի հույզերն ընկալելու, հասկանալու և ապրումակցելու կարողություններ:

Արժեքային համակարգի ձևավորում

Արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը, վերարտադրել սեփական բառերով:

Վերջնարդյունք

Կկատարեն ինքնուրույն վերլուծություն և մեկնաբանություն

Կկատարեն բառային աշխատանք՝ անծանոթ բառերի դուրսբերում,

Կկատարեն ստեղծագործական աշխատանք

Խթանման փուլ

Յուրաքանչյուր դասի արդյունավետության գրավականը դասի մուտքն է: Որքան լավ է կազմակերպված դասի մուտքը, այնքան մեծ է աշակերտների հետաքրքրության շրջանակը, սովորելու ցանկության խթանումը:

Դասն սկիզբ /5 րոպե/

Անդրադարձ-մտագրոհ նախորդ թեմային, որի միջոցով կապ կստեղծվի նոր թեմայի հետ:



Կան բանաստեղծներ, որոնք աշխարհ են ստեղծում, կան բանաստեղծներ, որոնք աշխարհ են վերապատկերում, կան բանաստեղծներ էլ, որոնք ոչ աշխարհ են պատկերում, ոչ էլ աշխարհ ստեղծում: Նրանք բացում են իրենց աշխարհը: Պետրոս Դուրյանը բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ Դուրյանական:

Իր կարճատև կյանքի ընթացքում Դուրյանն ստեղծեց գեղարվեստական մեծարժեք ստեղծագործություններ՝ դրամատիկական երկերի, հրապարակախոսական հոդվածների և քնարական բանաստեղծությունների ամբողջական շարքեր: Դուրյանի գրեթե երեք տասնյակ բանաստեղծությունները մեր պոեզիայի գանձերն են: Պետրոս

Դուրյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային դասական գրականության սակավաթիվ անուններից է, որ տակավին քսան տարեկանում ստեղծած գրական փայլուն արժեքներով զարմանք և հիացմուն պատճառեց հայ և նույնիսկ օտարազգի ընթերցողներին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Միլանում տպագրվեց Դուրյանի բանաստեղծությունների ժողովածուն: Դրանից անմիջապես հետո թերթերը գրեցին. «Ի դեմս Դուրյանի՝ իտալակւսն ժողովուրդը ծանոթանում է մի փոքրաքանակ ժողովրդի ներկայուսցուցչի, որն իր ազատագրության գաղափարներով ավելի քիչ չի ապրում, քան եվրոպական ուզածդ ժողովրդի բանաստեղծը»:

Ներածական այս փոքրիկ զրույցից հետո մեջբերում են Դուրյանի բանաստեղծությունները թարգմանող Վալերի Բրյուսովի խոսքերը. «Պատանի Դուրյանը մնում է հայ պոեզիայի պատմության մեջ որպես վառ, հրաշեկ շտրիխ: Ի թիվս մյուս, ավելի հանդարտ բանաստեղծների, նա ցույց տվեց, թե ինչ է նշանակում ստեղծագործության մեջ ավյունը, անմիջական ապրումների ուժը»:

Մեջբերում են նաև հետևյալ խոսքերը.

«Ապրելու և սիրելու իրավունքով ծնված բանաստեղծը միայն կյանքի «սև կաթը» ըմպեց, բայց երբեք չդավաճանեց իր քնարին ու իր վեհ կոչմանը: Իր մեծ նախորդ Սայաթ-Նովայի մնան «զայրացավ», բայց երբեք չչարացավ, ատեց, բայց երբեք չանիծեց»: /Հովհ. Թումանյանի/

«Դուրյանն է ամենեն պարզը ու իր պարզութեանը մեջ զգացմանց ամենեն վեհ բարձրությանը հասնող, բուն ժողովրդային հանճարն է ըստ իս»:/Գր. Զոհրապ/

«Մեր ժողովրդի տարաբախտ պատմության մեջ էլ եղել են բարեբախտություններ: Մեր ազգային բարեբախտություններից մեկն էլ

Դուրյանն է՝ մեր ազնվության վկայականը աշխարհի առաջ: Նրա գալուստը հրաշքի պես մի բան էր...»: /Պ. Սևակ/

Նոր նյութի մատուցում/15 րոպե/:

Հանձնարարում եմ գրել հնգյակ՝ «լճակ» բառով:

Հնգյակ գրելու կանոնները հետևյալն են.

1.Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (սովորաբար գոյական):

2.Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից (սովորաբար ածական):

3.Երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ (սովորաբար դերբայներ):

4.Չորրորդ տողը բաղկացած է չորս բառանի արտահայտությունից, որը ցույց է տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:

5. Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որ այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Օրինակ՝

Լճակ

Զմրուխտյա, գեղեցիկ

Գրավող, դյութող, ապրումակցող

Գեղեցիկ պահեր վերապրելու դրախտավայր

Ծովակ

Ավելի ուշ:

Աշակերտների գրած հնգյակներին անդրադառնալու ենք հետո:

Իմաստի ընկալման փուլ

Լիովին ըմբռնելու համար բանաստեղծի հոգեկան ապրումները, նրանց տեղեկացնում եմ բանաստեղծության գրելու շարժառիթի մասին՝ ասելով,

որ «Լճակ» բանաստեղծությունը գրելու շարժառիթը անձնական բնույթ ունի: Այստեղ մեջբերում եմ դերասանուհի Ազնիվ Հրաչյայի հիշողություններից մի հատված. «Մի անգամ Իսկյուտար Ազիզիե թատրոնում դերասանուհիների հետ խոսելու միջոցին ներս մտավ պատանի մը երկար հասակով ու երկար վզով, ուներ երկար քիթ, գունատ էր: Մոխրագույն ու շատ մաշված զգեստ էր հագած: Թևին տակ կար տետրակ մը: Երբ երևցավ, դերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով. «Քա' Թերեզա, քուկինդ եկավ»: Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինձի պետք չէ, շուտով կմեռնի»: Դերասանուհին հաստատում է, որ այդ խոսքերը լսել է Դուրյանը, և խիստ դառնացել նրա հոգին:

Իսկ ո՞վ է տիկին Ազնիվ Հրաչյան. դերասանուհի /1853-1919թթ/, որը Դուրյանի մասին խոսում է իր «Իմ հիշողությունները» գրքի/1909թ. Փարիզ/ 31-րդ էջում, դերասանուհու պատմածից երևում է, որ անձամբ հանդիպել է հանճարեղ բանաստեղծին և մասնակցել նրա թաղմանը: Իր այնքան հետաքրքրաշարժ հիշողությունները տիկին Ազնիվ Հրաչյան գրի է առել Հովհաննես Թումանյանի խորհրդով ու գիրքն էլ ձոնել է հանճարեղ լոռեցուն:

«Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Չամըլճա կերթա վերջին պտույտ մը ընելու, ետ դարձած ատեն կհանդիպի գինովի մը, որ անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քայլվածքը տեսնելով, կըսե.«Աս ալ երթալոց է»,-սա էլ հայագետ Արշակ Չոպանյանի վկայությունն է:

Գուցե «Լճակը» գրելու շարժառիթներ հանդիսացող այս երկու դեպքերն էլ ճիշտ են և իրողություն, բայց շատ ավելի հավանական է ու համապատասխանում է դերասանուհի Ազնիվի պատմածը:

Բանաստեղծության գրելու շարժառիթներն ասելուց հետո լսում ենք «Լճակ» բանաստեղծության՝ Հրաչյա Ներսիսյանի կամ Հրաչուհի Ջինանյանի անզուգական ընթերցումը:

Բանաստեղծության արտահայտիչ ընթերցանություն:

Ընթերցման ունկնդրման ավարտից հետո արդեն շատ տեղին է մեջբերել Պարույր Սևակի խոսքերը. «Դուրյանի աշխարհում լճակ կա, և ի՞նչ լճակ. Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները, Դուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք»:

Կշռադատման փուլ

«Քառաբաժան»

Ի՞նչ էինք տեսնում բանաստեղծությունը կարդալիս **Տեսողական** **Լսողական** **Զդացողական** **Համի և հոտի**	**Ի՞նչ էինք զգում բանաստեղծությունը կարդալիս** **Հույզեր** **Զգացմունքներ**
Կապը իրական կյանքի հետ **Առնչություններ** **Օրինակներ**	**Նոր վերնագիր**

Նաև հարցերի միջոցով աշակերտներին հնարավորություն է տրվում արտահայտելու իրենց զգացածն ու վերապրածը, զարգացնելու ինքնուրույն մտածողությունը, բանավոր խոսքը:

Խմբային աշխատանք հարցերով:

Այդ հարցերն են.

1. Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը, և ո՞ր տողերից եք դա հասկանում:

2. Պատահակա՞ն է արդյոք բանաստեղծի դիմումը լճակին և ոչ մարդկանց:

3. Ինչերի՞ միջև է զուգահեռներ անցկացնում բանաստեղծը:

4. Իր վշտերին հաղորդակից դարձնելով լճակին, երբեմն հակադրելով, երբեմն համադրելով իր հոգեկան կացությունը «հատակում փրփուրներ պահած լճակի» հետ՝ բանաստեղծը պատմում է սեփական վիշտը, ցույց է տալիս մարդու հոգու խռովքի գերազանցությունը բնության տարերքի խռովքի համեմատությամբ: Որո՞նք են այդ տողերը:

5. Բանաստեղծության մեջ կա նաև խուլ բողոքի շեշտեր զգացմունքից զուրկ մարդկանց դեմ. ասեք այդ տողերը:

6. Որ՞ն է բանաստեղծի ապրած հոգեբանական դրաման, որ տողերում է երևում բանաստեղծի արժանապատվության նվաստացման զգացումը:

7. Ոչ ոք չի փորձում անգամ խորանալ բանաստեղծի հոգու խորքը. տեսնել նրա հոգու հարուստ գանձերը և անսպառ հարստությունը: Իսկ ի՞նչ կա այնտեղ:

8. Կարո՞ղ եք հիշել մի այլ բանաստեղծություն, որի քնարական հերոսը խոսքի է բռնվում գետի հետ, ի՞նչ նմանություն եք տեսնում այդ երկու ստեղծագործությունների միջև:

9. Միայն մեկ նախադասությամբ բնութագրեք բանաստեղծությունը («Լճակը» կյանքից, սիրուց մերժված բանաստեղծի խորազգաց հոգու պատմությունն է»: «Բանաստեղծի գերզգայիկ հոգին բութ ու անտարբեր հասարակության մեջ զարնվել է անհոգի իրականությանը»: «Զգայուն անհատի դժգոհությունն ու բողոքն է անկարեկից միջավայրի դեմ»: «Լճակը» ինքնակենսագրական բնույթ ունի»: «Անարձագանք մնացած սեր,

շրջապատի մարդկանց անհոգի վերաբերմունք, վիրավորվածություն հասարակությունից»)։

10. Պատկերավորման և արտահայտչական ի՞նչ միջոցներ է օգտագործված բանաստեղծության մեջ, բերեք օրինակներ[7]։

Հարցերից հետո անդրադառնում ենք աշակերտների գրած հնգյակներին։ Ցանկացողները կարդում են իրենց գրածները և համեմատում Դուրյանի պատկերած լճակի հետ։

Ելքի քարտ

Կիրառում ենք 3-2-1 մեթոդը

1. Երեք նոր փաստ,որ իմացանք

2. Երկու փաստ,որ շատ կարևոր ու արդյունավետ եմ համարում

3. Մեկ հարց, որն առաջացավ ։

Դասն ավարտում եմ Պարույր Սևակի խոսքերով «Նա է մեր նոր քննարերգության առաջին մեծը և միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը»։

Հանձնարարում եմ անգիր սովորել բանաստեղծությունը։ Կատարել բառային աշխատանք։ Նկարել բանաստեղծությունը։ Գրել բանաստեղծություն՝ «Լճակ» վերնագրով։

Էլի ապշա՞ծ ես, լճակ,

Դու իմ սիրուն, կապուտակ,

Ո՞վ մոտեցավ քո ափին

Հուսահատ ու լալագին. . . .

[7] Կիրակոսյան Գ., Հայ գրականություն դասավանդման մեթոդիկա, 2015, էջ 75։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ թեմայի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

1.Բանաստեղծությունը անգիր հիշելը եղել է և մնում է ընթերցանության դասավանդման և գրականություն ուսումնասիրելու ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մասը: Չնայած այն հանգամանքին, որ շատերին դուր չի գալիս այս գործունեությունը, այն շատ բարենպաստ ազդեցություն է ունենում հիշողության զարգացման վրա, ինչպես նաև բարձրացնում է ընդհանուր մշակութային մակարդակը և զարգացնում գեղագիտական զգացմունքները:

2.Բանաստեղծությունը ոչ միայն իդեալական միջոց է երեխաների լեզուն զարգացնելու համար, այլ նաև օգտակար է հիշողությունը խթանելու և այս գրական գործիքի չափանիշներն իմանալու համար:

3. Բանաստեղծության ուսուցումը դպրոցում խթանում է երևակայության և ստեղծագործական մտքի զարգացմանը ՝ խրախուսելով երեխաներին ստեղծել իրենց սեփական ստեղծագործությունները:

Առաջարկում ենք.

- սովորողները իրենք փորձեն բանաստեղծություն գրել՝ հաշվի առնելով չափածո խոսքի մի շարք առանձնահատկություններ, իրենք գնահատեն իրենց աշխատանքը. ինչն էր լավ, ինչն էր վատ, ինչը ստացվել էր, ինչը թերի էր, իսկ բանաստեղծի մոտ այդ պատկերներն ու մեղեդայնությունը, գույները ինչքան ներդաշնակ են, ձուլված ու գեղեցիկ:

-սովորողները դուրս գրեն իրենց դուր եկած պատկերավոր արտահայտությունները, բառակապակցությունները և դրանցով կազմեն կապակցված խոսք :

- սովորողները 1,5-2 րոպեանոց սահիկաշար պատրաստեն,

-համապատասխան երաժշտություն և գույներ ընտրեն, երաժշտության ներքո ասմունքեն և ձայնագրեն:

- կիրառել բազմապիսի մեթոդներ/ Մտագրոհ,Հնգյակ, ԳՈՒՍ,Վենի դիագրամ, Ելքի քարտ , միավորային գնահատման իրականացման համար օգտագործել Quizizz առցանց գործիքը և այլն/:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայրենագիտական բառարան, Ե., 1988:

Զրբաշյան Է., Գրականագիտական բառարան, Ե1980:

Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018:

Թովմասյան Թ.,Մայրենի 5, Մեթոդական ուղեցույց, Ե., 2023:

Զրբաշյան Է., Գրականության տեսություն, Ե., 1980:

Կիրակոսյան Գ., Հայ գրականություն դասավանդման մեթոդիկա, 2015